ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԸ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Գ. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ավ. Իսահակյանի հարուստ ժառանգության մեջ մեծ արժեք են ներկայացնում նրա հուշերը, գրականության ու արվեստի տարբեր հարցերին նվիրված հոդվածները։ Իր բազմամյա գործունեության ընթացքում նա գրել է հայ դասական գրողների և արվեստի գործիչների հուշ-դիմանկարներ, անդրադարձել գրականության և արվեստի ամենատարբեր երևույթների ու հարցերի, թողել խորիմաստ բնութագրություններ։

Ում մասին էլ գրել է Իսահակյանը՝ Աբովյանի թե Թումանյանի, Կոմիտասի, Մ. Սարյանի թե Թորամանյանի, Պուշկինի, Շևչենկոյի, Ռուսթավելու կամ Նիզամու, բացահայտել է նրանց արվեստի կենդանի հմայքն ու ինքնատիպ բնույթը։ Նրա գրչի տակ գրականության և արվեստի երևույթները պահպանում են իրենց ներգործոն ուժն ու հարստությունը։

Իսահակյանի գրական-տեսական ժառանգության մեջ առանձնապես հետաքրքրական են XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ մշակույթի հարցերը։ Ուշադրության կենտրոնում են հավասարապես գրականությունն ու ճարտարապետությունը, երաժշտությունն ու կերպարվեստը։

Ավ. Իսահակյանը միշտ գտնում էր իր ժամանակակիցների արվեստի ուժը և ինքնատիպությունը բացահայտող մեկնակետեր, բնորոշումներ ու որակումներ։ Նրա ստեղծած բազմաթիվ դիմանկարների շրջանակներից դուրս են գալիս և ի մի հավաքվում հատկանիշներ, որոնք վերստեղծում են ժամանակաշրջանի գրականության և արվեստի ընդհանուր պատկերը։ Իսահակյանի զննող ու իմաստավորող հայացքի տակ ժամանակաշրջանի հայ մշակույթի զարգացումը երևում է իր արմատական օրինաչափությամբ։ Նա տեսնում է, թե ինչպես երկու դարերի սահմանագծում այն մի կողմից արմատներ է նետում դեպի ժողովրդի դարերով ավանդած ստեղծագործական արժեքները, մյուս կողմից՝ ազգային նորովի հասակ առնում, վերածնվելով վերահաստատվում, նոր թռիչք գործում։

Իսահակյանի մեկնությամբ Թումանյանի ու Կոմիտասի, Սարյանի ու Թորամանյանի հանճարը խոյացավ ժողովրդի ընդերքից, վերակոչելով ազգային արվեստի ավանդները, տոհմիկ ուրույն երակները, անսպառ հարստությունները։ Սա Իսահակյանը համարում էր դարամուտի հայ մշակույթի ամենից ընդհանուր օրինաչափությունը։

Երկու դարի սահմանագծում հայ գրականությունը ներխուժում էր մարդկային կյանքի ընդերքը, լայնացնում էր հունը, ժողովրդայնանում։ Այս միտումների կրողն ու իրագործողը պոեզիայում դարձավ Հովհ. Թումանյանը, որ վերակոչեց հայ մշակույթի ժողովրդական տարերքը և առողջ ու ամուր հիմքեր ստեղծեց նրա հետագա զարգացման համար։ Իսահակյանի բնորոշ-

մամբ՝ Թումանյանը կերտված էր հայ ժողովրդի նյութից, իր հարազատ աշխարհի մարմնից է մարմին առել նա և հոգուց՝ հոգի։

Այդ հարազատ աշխարհը Թումանյանի համար եղավ հայրենի Լոռին. «Այս հոյակապ բնության մեջ, այս՝ ավանդություններով, առասպելներով, հիշատակներով լի չքնաղ սարերում ու ձորերում նա բազմապատկվել էր կյանքով, ապրում էր ամեն մի քարն ու քոլը, ճանաչում էր ամեն մի խորշը, անտառը, աղբյուրը, որոնց հետ նվիրական հուշերով կապված էր իր մանկությունն ու պատանեկությունը։ Նա գիտեր նրանց մասին անթիվ զրույցներ, դեպքեր, դրվագներ և գիտեր բովանդակ Լոռվա հինավուրց և նոր պատմությունը բոլոր մանրամասներով»[1]։

Այստեղից է բարձրանում ու ձևավորվում Թումանյանի աշխարհաճանաչողությունը, զարմանալիորեն ներդաշնակելով ժողովրդի կենսահայեցությանը, ժողովրդական հոգեբանությանն ու մտածողությանը։ Եվ միայն այս ճանապարհով է՝ «ժողովրդական արվեստի ճանապարհով, որ անձուկ հայրենիքների և փոքր ժողովուրդների բուսահողից ծնված բանաստեղծները դառնում են համամարդկային մեծություններ, ինչպիսին են Միստրալը և Թումանյանը»[2]։

Թումանյանը բառացիորեն ապրել ու շնչել է իր ժողովրդի ավանդություններով, հեքիաթով, զրույցով ու երգով, ճարտարապետական հնամենի կոթողներով։ Իսահակյանը վերհիշում է, թե ինչպիսի հոգեկան պահեր է ապրել Թումանյանը Անիում. «Օհաննեսը հիացմունքով ու ուշով դիտում էր ամեն մի բեկոր՝ արվեստի կնիք կրող։ Լուռ, մտասույզ թափառում էր՝ անցյալի հետ ներքին խոսակցությամբ տարված, կանգնում էր հրաշակերտ շենքերի առաջ, հայացքը լարած նայում էր սյուներին, կամարներին, քանդակներին, ապա աչքերը գոցում և ականջները լարում, կարծես, մի երաժշտություն էր լսում, ոչ սովորական, ոչ այս աշխարհից»[3]։ Նա լսում էր իր ժողովրդի ողբերգական ճակատագրի երաժշտությունը, և նրա բախտի մտահոգությունը տեղ չէր թողնում անհատապաշտական պարապ խաղերի համար գրականության մեջ և արվեստում։

Հայ ժողովրդի մեծ բարեբախտություններից էր այն, որ իր գոյության ամենաողբերգական շրջանում ունեցավ այնպիսի զավակներ, ինչպիսիք են՝ Թումանյանն ու Կոմիտասը, Իսահակյանն ու Սիամանթոն, Վարուժանն ու Տերյանը, Սուրենյանցն ու Սարյանը, Թորամանյանն ու Թամանյանը և շատ ուրիշներ, որոնք նորովի վերակոչեցին մշակութային դարավոր ավանդները, կանխորոշելով գալիքում դրանք ծավալելու լայն հեռանկարներ։

Թումանյանի պոեզիայի ժողովրդայնությունը, Իսահակյանի համոզմամբ, ունեցավ ոչ միայն գրական, այլև պատմական անգնահատելի նշանակություն։ Թումանյանը՝ հոգևոր կյանքը պահեց ժողովրդական կյանքի և մտահոգությունների լայն հորիզոնների բովում։

Պոեզիայից անցնելով ավելի լայն ընագծեր, քննելով ընդհանրապես XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ արվեստի երևույթները, Իսահակյանը շեշտում է, որ հանձին Թումանյանի, Կոմիտասի, Սարյանի ու Թամանյանի

---

1 Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 30։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 27։

հայոց բանաստեղծությունը և արվեստը ձևավորվում են ներդաշնակելով ժողովրդի աշխարհատեսությանը, ժողովրդական կենսազգացողությանն ու մտածողությանը։

Բնութագրելով Կոմիտասի պատմական դերը ժողովրդի հոգևոր առաջընթացում, Իսահակյանը գրում է. «Նա խառնվեց այդ երգերը ստեղծող ժողովրդի հետ, ներծուլվեց նրա հետ, ներապրեց նրա երգերը և սրտով հասկացավ, որ հայ երգի ոճը թաքնված է ժողովրդի այդ երգերի մեջ... Եվ ցույց տվեց աշխարհին մեր ազգային երգը՝ մաքրված, ինքնուրույն և անաղարտ»[4]։ Եվ ապա՝ «Մեր շինականի երգերը՝ աշխատանքի, բնության, սիրո, ուրախության և տխրության, նա բյուրեղացրեց, բարձրացրեց և որպես ազգային մեծարժեք գանձ գրեց մեր ժողովրդի հոյակապ գանձերի՝ ճարտարապետության և Սասունի էպոսի կողքին»[5]։

Կոմիտասի մասին հուշերում Իսահակյանը շեշտում է այն գաղափարը, որ մեծ երգահանի արվեստում հայրենի երկիրը «հավաքվում է» ոչ միայն աշխարհագրական առումով, նրա երգերում խաչմերվում են ոչ միայն Վանի, Շիրակի, Արարատյան դաշտի, Մուշի հնչյունները, տյլև խտանում, սինթեզվում է հայ մելոսը իր երկարաձիգ պատմական լինելիությամբ։ Ժողովրդին, ժողովրդի հոգևոր մշակույթի դարավոր ավանդներին հարազատանալով էլ բանաստեղծությունն ու արվեստները ձեռք են բերում այն նշանակությունը, ինչ մատնանշվում է Կոմիտասի վաստակը գնահատելիս. «Նրա երգով մեր ժողովուրդն ավելի գիտակցաբար զգաց իրեն, ավելի կապվեց իրար հետ, ինքնաճանաչեց»[6]։

Իսահակյանի համողմամբ՝ XIX դ. նախաշեմին Աբովյանի ստեղծագործությամբ ծայր առած ժողովրդի ինքնաճանաչման հունը լայնանում է, իր մեջ առնելով մյուս արվեստները, հոգևոր ողջ մթնոլորտը։

XIX դ. սկզբից հայ իրականության մեջ հետզհետե մեծ թափ է ստանում ժողովրդի հոգևոր գանձերը լայն աշխարհ դուրս բերելու սրբազան գործը։ Աբովյանը «կրակ ու բոց որոտաց, և շարժվեց հայ ժողովրդի ներաշխարհը բովանդակ»։ Հանուրի ճանաչման արժանացավ «Սասնա Ծռերը», մոռացությունից հարություն առան միջնադարյան տաղերգությունը, Սայաթ-Նովան, սկսվեց հայ հոգևոր գանձերի հայտնության և հավաքման մի եռանդուն ժամանակաշրջան։ XIX դ. նշանավորվում է միանգամայն մտածված ու հետևողական հետաքրքրությամբ դեպի հայ ժողովրդի գրավոր ու բանավոր դարավոր մշակույթը։ Նույն օրինաչափությամբ էր առաջ շարժվում նաև հայ ճարտարապետությունը։ Իսահակյանի բնութագրմամբ՝ Թորամանյանը և Թամանյանը ուրվագծում են հայ արվեստի «կառույցը»՝ պատմության խորին ծալքերում նստած իր հիմքով և նոր ժամանակների հետ խոսող ճարտարապետական ոճով։ Թորամանյանի մասին նա գրում է. «Նա ընդհուպ մոտեցել էր հայ արվեստի արմատներին, որ գտնվում են հայկական բնաշխարհում. նա պեղել, փորփրել էր, հետազոտել էր հնագույն արմատները, որոնցով սնվել և բարձրացել է հայ մեծ արվեստի շենքը»[7]։

---

4 Նույն տեղում, էջ 33—34։
5 Նույն տեղում, էջ 34։
6 Նույն տեղում։
7 Նույն տեղում, էջ 39։

ժամանակաշրջանի արվեստների զարգացման մեջ Իսահակյանը ամենուրեք շեշտում է երկմիասնական մի ընթացք՝ ինքնաճանաչումից դեպի ինքնահաստատումը: Նույն տեսանկյունից է նա արժեքավորում Մ. Սարյանի արվեստը, մեկնում ու բացատրում նրա ստեղծագործական, գունային ու ոճական սկզբունքներն ու դավանանքը. «Նրա (Սարյանի—Գ. Հ.) տեսությամբ գեղարվեստն իր բոլոր ճյուղերով գերազանցորեն ազգային է և որպես այդպիսին միայն իրավունք ունի ապրելու... Առանձին, ուրույն ոճ ու ձև չունեցող արվեստները... սոսկ նմանություններ են, անշահ կրկնություններ և դատապարտված մեռնելու»[8]:

Սա, իհարկե, նաև իրեն՝ Իսահակյանի, գեղագիտական հավատամքն է, որը, հավատարիմ ժողովրդի բանաստեղծական մտածողությանը, հոգևոր դարավոր նստվածքներին, իր ստեղծագործությամբ խթանեց հայ արվեստի ինքնության վերահաստատմանն ու խորացմանը: Արվեստագետը գեղարվեստորեն սինթեզեց, խտացրեց ժողովրդի դարավոր հարստությունները և հաստատեց նրա մեծ ինքնությունը. «Յուրաքանչյուր ազգ,— ավանդել է բանաստեղծը,— պիտի ունենա իր ուրույն, ինքնահատուկ ոճը, միայն ոճ ունեցող ազգերն են ապրում, և չեն ջնջվում ոչ ջարդերով, ոչ հրով ու սրով. ոճը ազգի նկարագիրն է: Արարատի ստվերի տակ ապրող ժողովուրդն իր երգով ու իր ճարտարապետությամբ պերճախոս կերպով ցույց է տալիս աշխարհին. որ ինքը դեմք ունի, իր ձևն ունի, իր սեփական-անհատական ըմբռնումն ու առարկայացումը աշխարհի, նրա իրերի և նրա խորհուրդների»[9]:

Իր հոդվածներում Իսահակյանը կարողանում է շղթայել պատմական անցյալը, ներկան և ապագան, ժողովրդի ճակատագիրն ու գրականության հասարակական դերը, այդ ամենը իմաստավորել ժողովրդի, մարդկության զարգացման առաջընթացի դիտակետից:

Բանաստեղծի գնահատմամբ՝ ինչպես բաղմադարյա հայ գրականության, այնպես էլ նոր ժամանակների գրականության իշխող ոգին, «հավերժ շողշողացող բովանդակությունն է եղել, ազատության անշեջ ծարավը, պայքարը, հայրենասիրությունը և մարդկային արժանապատվության հարգանքը»[10]:

Աբովյանի, Նալբանդյանի, Աղայանի, Պռոշյանի, Նար-Դոսի և մյուս գրողների վաստակը գնահատելիս Իսահակյանը ելնում է մի ընդհանուր սկզբունքից՝ գրականության հասարակական մեծ նշանակության ճանաչումից: Հայ գրականության պատմության առանցքը, Իսահակյանի մեկնաբանությամբ, շահախնդրությունն է՝ ժողովրդի ամենաարմատական ու կենսական խնդիրների պաշտպանությամբ: Եվ սա ոչ միայն հասուն տարիների հավատամք էր, այլև տակավին երիտասարդ, հետաքրքրությունները նոր-նոր ճշտող բանաստեղծի սկզբունք:

Նման փաստերը առանձնակի հնչեղություն ու նշանակություն են ստանում մանավանդ այն դեպքում, երբ հայացք ենք գցում իննհարյուրական թվականների գրական-հասարակական ընդհանուր մթնոլորտին, ուր տիրում էր գրականության և արվեստի հասարակական նշանակության արժեքազրկման մտայնություն:

---

8 Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, Երևան, 1966, էջ 182:

9 «Սովետական գրականություն», 1971, № 1, էջ 138:

10 Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 86:

Բանաստեղծն իր տարերքով և էությամբ ստեղծագործական դեռ վաղ շրջանից անխզելիորեն կապված է եղել ժողովրդի ու դրականության կենսունակ ու մարտունակ ավանդներին։

Կարելի՞ է արդյոք անցնել այն փաստի կողքով, որ դեռևս 1902 թ. նա իր հոգում կրել է Սասմա Մհերի կերպարը մշակելու գաղափարը և տարիներ շարունակ, անգամ ռեակցիայի ծանր օրերին, «ապրել է» ժողովրդի ազատասիրական ձգտումներն ու ուժը կրող Մհերի հետ։

Իսահակյանի հետաքրքրությունը «Սասնա Ծռերի» հանդեպ ծայր է առել իննսունական թվականներից և երբեք չի թուլացել։ Էպոսի մեջ նա տեսել է ժողովրդի մաքառող, անխորտակելի ոգու խտացումն ու խոյանքը։ Այն, ինչ մտորել էր էպոսի շուրջը ողջ կյանքի ընթացքում, այն, ինչ նրա հավատո հանգանակն էր՝ արտահայտվել է «Սասունցի Դավթին» նվիրված քննական հետազոտության էջերում։ Իսահակյանի առաջին կարևոր հետևությունն այն է, որ էպոսը ոչ թե փոխանցվել է սերնդից-սերունդ, այլ ապրել է ամեն սերնդի հետ, դարձել ժողովրդի հավաքական, ընդհանրական կերտվածքը։ Հայոց պատմիչների կողքին, վկայում է Իսահակյանը, մեր ժողովուրդը նրա մեջ հյուսել ու խտացրել է իր բազմադարյա գոյության և լինելիության պատմությունը։ Ամեն սերունդ ուժ է տվել էպոսին, և ամեն սերունդ ուժ առել նրանից։ Էպոսը դարավոր նստվածքներով ու բյուրեղացումներով պահպանել է ամենաբնորոշը, յուրահատուկը ժողովրդի հոգեբանությունից՝ նրա մաքառող ոգին, որին ժամանակների ամենադաժան փորձություններից չի դիպել վհատության որևէ շորշոփ։

Հայկական էպոսի անգնահատելի արժեքը Իսահակյանը տեսնում է ժողովրդի պատմության խտացումների մեջ, նրա գոյության տարբեր շերտերի ու ծայրերի միաձուլման, ժողովրդի կյանքի ու պատմության ամբողջական ընդգրկման մեջ։ «Սասնա Ծռերի» դիցաբանական արմատներին վերաբերող Իսահակյանի այս աշխատությունն իր հարցադրումների համակողմանիությամբ մնում է և կմնա իբրև լավագույն ուսումնասիրություններից մեկը հայոց էպոսագիտության մեջ։ Այն, ինչ արտահայտվել է էպոսում՝ եղել է ժողովրդի տարերքը, և երբ Իսահակյանն էպոսի վերաբերյալ իր խոհերն ու մտորումները համադրում է հայ գրականության, ճարտարապետության, արվեստի այլ ճյուղերի զարգացման օրինաչափություններին, ապա դրանց միջև հայտնաբերում է մի զարմանալի ընդհանրություն, օրգանական միասնություն։

Իսահակյանի ամբողջ կյանքի համոզմունքը եղել է այն, որ դաժան ճակատագիրը չի թուլացրել ժողովրդին, այլ ավելի ու ավելի է պրկել ու լարել նրա ուժերը, դրսևորվելով հոգևոր մշակույթի բոլոր ճյուղերում։ Հայ ժողովրդի և գրականության հանդեպ Իսահակյանի հայացքը՝ ժամանակի հետ համաքայլ ընթացող, ազգային իսկական արժանապատվություն ունեցող արվեստագետի հայացք է։ Նրա համար վեհն ու հայրենասիրականը, հպարտություն ներշնչողը՝ հարազատ ժողովրդի պատմական գոյության լավագույն ավանդների ոգով համընթաց քայլելն է առաջավոր մարդկության հետ. «Հայ ժողովուրդը... գոյության անտեղիտալի կռիվ է մղել և զարհուրելի բախումների մեջ կոտորակվելով և վերստին կոտորակվելով այնուամենայնիվ մնացել է միշտ կանգուն իր նվիրական հողերի վրա, և միշտ հոգով աննվա՛. ա.

պատատենչ և լուսաբաղձ։ Իր արյունոտ մաքառման էպոսը կռել-կոփել է իր համար Թուր Կայծակին, որ երբեք նա ձեռքից վայր չձգեց...

... հայ ժողովուրդը՝ անմահ ոգով, նորից ոտի է կանգնել բոլոր փլուզումների և կոտորածների միջից, նորից վառել է իր գոյության օջախը իր սրբազան ավերակների վրա, նորից և նորից կերտել է՝ իր նման անմահ մեր քարերին տալով գեղեցկություն և իմաստ, նորից հավերժացրել է իր մագաղաթյա մատյանները։ Եվ կերտելով ու ստեղծելով նորից ու նորից իրականացրել է իր ապրելու հզոր կամքը»[11]։

Իսահակյանի այս և նման բնութագրերում ի մի են բերված ժողովրդի կյանքի, պատմության ու մշակույթի ամենակարևոր գծերը։ Այդ ընդհանուր նկարագրում ամենուրեք շեշտվում է ազատասիրության և ստեղծագործ աշխատանքի ձգտումը ժողովրդի պատմական գոյության ընթացքում, կյանքում և էնսայիստիկ փիլիսոփայության մեջ։

Ազգային սնափառությունը, ինչպես և ազգային վշտերի մեջ սուզվելն ու թաղվելը, սպեկուլյատիվ աղաղակները անհարիր են իսահակյանական հպարտ ու վեհ հայրենասիրությանը։ Իր ժողովրդի ուժերի հանդեպ ունենալով անսպառ հավատ, նա մշտապես խոսում էր նրա կառուցելու, ստեղծելու, մաքառելու, առաջադիմելու ունակություններից։

Ազգային արժանապատվության այս խոր զգացումն էլ հնարավորություն է տվել նրան լիաթոք սիրելու բոլոր ժողովուրդներին, գնահատելու և փայփայելու նրանց նյութական ու հոգևոր արժեքները։

Իսահակյանը հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը համարում էր կենսունակ ու հավերժական։ Արվեստագետ-քաղաքացին այդ բարեկամության խորհուրդը բացատրում էր նրանով, որ հայ ժողովուրդը իր պատմության տրամաբանությամբ օրինաչափորեն պետք է մղվեր դեպի սոցիալական, հասարակական, պատմական այնպիսի արմատական հեղաբեկումների ընդունակ մի ժողովուրդ, ինչպիսին է ռուս ժողովուրդը։ Այս ելակետից էլ նա գնահատում էր ռուս ժողովրդի բարեկամական հովանավորությունը, Ռուսաստանին միանալու հայ ժողովրդի դարավոր ձգտումները. «Պետրոս մեծի երևան գալուց սկսած պարսիկ շահերի լծի տակ հյուծվող հայությունը ձգտելով ձգտում էր, երազելով երազում միանալու ռուս նորածագ պետությանը, ընդունելու նրա թևարկությունը։ Հայությունը համոզված էր, որ իր անհուն տառապանքներին վերջ կարող է տալ միայն ռուսական զորությունը և նրա իշխանության ներքո հայությունը կսկսի աճել, զարգանալ, մանավանդ մարդկային և ազգային կյանքով ապրել։ Այս երազը իրականացնելու համար Կովկասի հայերը ամբողջ մի դար պայքարեցին զենքը ձեռքներին, արյուն թափեցին ռուս զինվորի հետ միասին և հաղթանակեցին»[12]։

Ռուս ժողովրդի հանդեպ Իսահակյանի ունեցած վերաբերմունքը զուգակցվում էր մեծ սիրով դեպի ռուսական գրականությունն ու արվեստը։ Նրա կարծիքով՝ XIX դ. ռուս գրականության և արվեստի աննախընթաց վերելքը պայմանավորված էր ժողովրդի ներքին կարողություններ կուտակման հզորությամբ։ Խոսելով Պուշկինի մասին, շեշտելով նրա ստեղծագործության խորությունն ու ապոլոնյան հմայքը, գրում է. «Ժողովրդի հանճարը ծնվում է

---

11 Նույն տեղում, էջ 192—193։

12 Նույն տեղում, էջ 118։

ժողովրդի թանձրության ճնշումից, ինչպես ադամանդը քարածուխի ճնշումից։ Եվ այդ ադամանդը ժողովրդի զգացմունքների, նրա տենչերի, երազների, նրա տառապանքների, նրա զայրույթների և կամքի խտացումն է և կոնկրետացումը»[13]։

Պուշկինի ստեղծագործության մեջ նստվածքներ են տվել ժողովրդի լեռնացող ազատասիրության ու ցասման տրամադրությունները։ «Պուշկինն ազատատենչ, ըմբոստ ոգի էր, բռնկած իր ժամանակի ժողովրդասեր, հեղափոխական և առաջադեմ դաղափարներով, որով նա անհավասար պայքարի մեջ էր ցարական դեսպոտիզմի և ազնվականության դեմ, այն խավարամիտ, ռեակցիոներ դարի դեմ»[14]։

Մեծ բանաստեղծները բորբոքում են կրակոտ դաղափարների բռնկումներ, ասում է Իսահակյանը Տ. Շևչենկոյի մասին. նա «հրդեհ վառեց ուկրաինական աղնիվ ժողովրդի սրտում՝ ազատության, հերոսության, անձնազոհության հրդեհը... Այդ հրդեհն այրեց, մոխիր դարձրեց ամեն տեսակի բռնությունները»[15]։

Ամենատարբեր առիթներով Իսահակյանը նշել ու շնչտել է ռուս առաջավոր գրականության մարդասիրական և ազատասիրական բովանդակությունը։ Պուշկինը, Լերմոնտովը, Գոգոլը, Դոստոևսկին, Չեխովը նրա համար եղել են ներշնչանքի մշտական աղբյուր։ Այդ սերը տարածվել է ընդհանրապես Ռուսաստանի՝ նրա արձակ ու անծայր բնաշխարհի, ժողովրդի հոգևոր նկարագրի վրա։

Իսահակյանի համակրանքներն ու սպասումները նոր լիցք են ստանում հատկապես հեղափոխական փոթորիկների տարիներին։ Հեղափոխության վիթխարի «պայթուցիկ նյութի խտացումը» Ռուսաստանում մեծ բեկումներ էր խոստանում մարդկությանը։

Բնութագրելով իննհարյուրական թվականների իրավիճակը, նա արձանագրում է, որ «Ռուսաստանը քաղաքականապես, տնտեսապես և մտավորապես հասունացել էր՝ ներուժ, մեծածավալ գոտեմարտի՝ ցարիզմի ու երիտասարդ ռուս կապիտալի հետ, նրանց փլատակների վրա բարձրացնելու ազատ, երջանկացնող մի նոր իրավակարգ»[16]։

Ծայր էր առնում երիտասարդ ռուսական պրոլետարիատի գրոհի և փոթորկի ահեղ ժամանակաշրջանը։ Հասարակական-սոցիալական այս պատվանդանի վրա է Իսահակյանը դիտում հեղափոխության մրրկահավին՝ Մաքսիմ Գորկուն, գնահատում նրա ստեղծագործության նշանակությունը. «Որպես ռոմանտիկ նա պրոլետարիատի և ամբողջ աշխարհի աչքերի առաջ հայելացրեց ապագա սոցիալիստական երջանիկ աշխարհը, ազատ, արդար և մարդկային բարձր կոչման վայել նոր կյանքը»[17]։

Ժողովուրդների պատմության, գրականության մեջ և արվեստում ամենաթանկն ու արժեքավորը, նրա ըմբռնմամբ, հասարակական առաջադիմու-

---

13 Նույն տեղում, էջ 106։
14 Նույն տեղում, էջ 105։
15 Նույն տեղում, էջ 129։
16 Նույն տեղում, էջ 146։
17 Նույն տեղում, էջ 147։

թյան սրբազան ավանդներն են։ Եվ առաջադիմության ու ազատության համար մղված պայքարում է զոդվել ու ամրապնդվել ռուս և անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը։

Իբրև մեծ քաղաքացի բանաստեղծը չափազանց խորն էր գիտակցում վրաց, ադրբեջանական ու հայ ժողովուրդների միասնության և բարեկամության նշանակությունը։ Դարասկզբին ցարական կառավարությունը ջանք չէր խնայում ազգամիջյան կռիվներ հրահրելու անդրկովկասյան ժողովուրդների միջև։ Իսահակյանը մեկն էր այն գրողներից, որ բոլոր միջոցներով պաշտպանում էր եղբայրական ժողովուրդների անհաղթ միասնությունը՝ ընդդեմ ազգամիջյան թշնամանքի ու հալածանքների։ Նա ապրում էր այն համոզմամբ, որ անդրկովկասյան ժողովուրդներն իրենց դարավոր պատմության բոլոր հանգուցյններում կապված են եղել միասնական շահերի ու համագործակցության նվիրական ավանդներով։

Տեղին է նկատել Կոնստանդին Գամսախուրդիան. «Հայերի և վրացիների իսկական եղբայրական զգացումները զոդել են ոչ միայն Իլյա Ճավճավաձեն և Ակակի Ծերեթելին։ Հայ ժողովրդի հանճարը ծնել է իր գրականության երեք մեծ պատգամախոսներին՝ Հովհաննես Թումանյանին, Դերենիկ Դեմիրճյանին և Ավետիք Իսահակյանին, որոնք անկեղծ սիրով հիշեցնում էին մեր ժողովուրդներին, որ Քարթլոսը և Հայկը եղբայրներ են եղել»[18]։

Վարպետը ճշմարիտ պատգամախոսի առաքելությամբ է նայել հայ և մյուս ժողովուրդների բարեկամությանը, նրա ազգային մտահոգությունները, ժողովրդին ծանր վիճակից ելք գտնելու որոնումները երբեք պատնեշված չեն եղել նեղ սահմաններում։ Հայրենական պատերազմի տարիներին, երբ ֆաշիստական գաղափարախոսները միտում էին սեպ խրել սովետական ժողովուրդների միջև, Իսահակյանը հավաստում էր. «Կովկասի եղբայրական ժողովուրդները՝ վրացի, ադրբեջան և հայ միասին, մի կամքով ու մի բազկով կռվել են Շահ-Աբասի անգութ հրոսակների և ավերումների դեմ, արյունռուշտ աղա-Մահմեդ խանի արշավանքի դեմ...

Մեր երկնահուպ լեռները՝ տակավին հազարամյակներ առաջ ականատեսներ են մեր նախահայրերի եղբայրական միակամ սխրագործություններին»[19]։

Իսահակյանը ծիծաղելի է համարել հայ ժողովրդի կենսական հարցերը ազգային կեղևում լուծելու ճիգերը։ Անդրկովկասյան ժողովուրդների հետ միասին՝ համառուսական շարժումներին աջակցելը, համագործակցությունը մյուս ժողովուրդների հետ, նա համարում էր հայ ժողովրդի գոյության ու առաջընթացի միակ հուսալի պատվարը։ Մարդկության մեծ ճանապարհի ուղեգիծը, բանաստեղծի համոզմամբ, եղել է պայքար հանուն սոցիալական-քաղաքական ազատության ամեն կարգի բռնությունից։ Նրա կուռ և ամբողջական մեկնությամբ՝ մարդկությունն անընդմեջ անցել է մաքառումների, ընդվզումների, բողոքի ու ցասման ճանապարհով։ Եվ պատմության զարգացման այդ տենդենցները բացահայտելու մեջ էլ նա տեսնում էր գրականության ու արվեստի ուժն ու նշանակությունը։

---

18 Մեջ է բերված Գ. Կանկավայի ավտոռեֆերատից («Аветик Исаакян и грузинская литература», Тбилиси, 1960, стр. 5).

19 Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 197